

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՍԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-188 օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

Ծրագրի կատարման հաշվետվությունն ընդգրկում է 2008թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

Հաշվետու ժամանակաշրջանում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 31-ի ՀՕ-124-Ն օրենքը: «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը» և «2. Նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից:»: Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման նոր ծրագիր չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

1) Հաշվետվությունը ներկայացվում է որպես 2008 թվականի օրացուցային տարում իրականացված մասնավորեցման գործարքների ամփոփում.

2) Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված մասնավորեցման գործարքները վերաբերում են նաև մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված ընկերություններին և մասնավորեցման օբյեկտներին:

Հաշվետու ժամանակաշրջանում Ծրագրում կատարվել են հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

«Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-48-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի N 1 ցանկի 34-րդ կետը՝ Հայաստանի Հարապետության

բնապահպանության նախարարության ընկերությունների ցանկում 90034 ծածկագրի տակ ամրագրված «Անալիտիկ» պետական փակ բաժնետիրական ընկերության (քաղ. Երևան, Կոմիտասի 29) մասով.

«Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-223-Ն օրենքով Օրենքի N 1 ցանկում լրացվել է 6 ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության տրամադրութիւն և կապի նախարարության «Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90054), Երևանի քաղաքապետարանի «Արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90052), Գեղարքունիքի մարզպետարանի «Մարտունու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90056) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Զիասպորտի կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90057), Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Հայներարտորանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 2,35%-ը (ծածկագիր՝ 90053), Հայաստանի Հանրապետության կառավարության առլներ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ստեփանավան» օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90055), ինչպես նաև շտկումներ են կատարվել նախարարությունների անվանումների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները և իրականացված միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը: Մասնավորապես, շարունակվել է մասնավորեցման այն քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս մասնավորեցվող ընկերություններում առավելագույն ներդրումներ կատարել և ընկերությունները վաճառել ուղղական ներդրողներին: Մասնավորապես, 2008թ. ընթացքում ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

1. Պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացը կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 6-ի N 1280-Ն որոշումը, համաձայն որի՝ իրականացվելու է մասնավորեցվող

պետական անշարժ գույքի և հիմնական միջոցների շուկայական գնահատում՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. **Պետական գույքի մասնավորեցման և կառավարման գործընթացի որոշ հիմնախնդիրների լուծման և ընկերությունների լուծարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել է «Լուծարումից հետո մնացած գույքի տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, որն ընդունվել է 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշմամբ:**

3. **Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 870-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 118-րդ և 119-րդ կետերի, մշակվել են Հայաստանի Հանրապետության կառավարության «Ֆոնդային բորսաներում նոր բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով պետական գույքի մասնավորեցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հուլիսի 2-ի N 416 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական գույքի մասնավորեցումը ֆոնդային բորսաների և այլ կարգավորվող շուկաների միջոցով իրականացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը, որոնք ընդունվել են համապատասխանաբար 2009 թվականի փետրվարի 12-ի N 142-Ն և N 137-Ն որոշումներով:**

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 7 ընկերություն, որից 4-ը վաճառվել է ուղղակի վաճառքի ձևով (այդ թվում՝ ներդրումների կատարման և այլ պարտավորությունների ստանձնման պայմաններով) և 3-ը՝ աճուրդով:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին փաստացի մուտքագրվել է 555 200,8 հազ. դրամ:

Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-128-Ն), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-127-Ն) և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-126-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքների՝

2008 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 69 249,8 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ գանգվածային լրատվության միջոցներով հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի մասնավորեցման գործընթացի իրականացմանը խոշընդոտել են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից հիմնականներն են՝

1) մասնավորեցման ներկայացվող ընկերությունների ցածր գրավչությունը ներդրողների համար և ընկերությունների խոշոր պարտքերը.

2) Ծրագրում ընդգրկված ընկերությունների մի մասի սնանկացման գործընթացում գտնվելը և դրանց գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2.1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

2.1.1. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 4 ընկերություն: Ընկերություններից 2-ի բաժնետոմսերը վաճառվել են նախօրոք հայտնի գնորդներին, 2-ինը՝ աշխատավորական կողեկտիվին:

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների և դրանց գնորդների ստանձնած ներդրումային պարտավորությունների մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

2.1.2. Աճուրդով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցվել են Ծրագրում ընդգրկված 3 ընկերությունների բաժնետոմսերը, որոնց մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2-ում աստղանիշով (*) նշված ընկերությունների բաժնետոմսերի գնորդների հետ հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման պայմանագրեր չեն կնքվել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
**հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված
 ընկերությունների և գույքի մասին**

N	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Հասցեն	ՀՀ նախարարությունը, պետական կառավարման մարմինը	ՀՀ կառավարության որոշման համարը, անսարիկը	Պետական գույքի գնահատ-կած արժեքը (հազ. դրամ)	Վաճառ-քի գինը (հազ. դրամ)	Պարուա-փորությունները, (հազ. դրամ)	Պայմանագրային պարտավորությունները	Պայմանագրի կնքման ամսաթիվը	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	«Անդրոն» կոնվերսային էլեկտրասարքավորումների Գ.Հ.Ի» ՓԲԸ (62032) ({«Անդրոն» գիտահետա-գոտական ինստիտուտ տեխնոպարկ» ՓԲԸ)	քաղ. Երևան, Մանանյան 33	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	N 15-Ն 10.01.2008	94092	94092	28981	I տարում՝ 13 մլն դրամ, 96 մարդ/ամիս աշխատատեղ՝ 75 հազ.դրամ միջին աշխատավայրենվ, II տարում՝ 17 մլն դրամ, 120 մարդ/ամիս աշխատատեղ՝ 90 հազ.դրամ միջին աշխատավայրենվ, III տարում՝ 20 մլն դրամ, 144 մարդ/ամիս աշխատատեղ՝ 100 հազ.դրամ միջին աշխատավայրենվ:	21.03.2008	Հայտնի գնորդ
2.	«Կոմետա - 1» ԲԲԸ (90004)	քաղ. Աշտարակ, Գյուղական	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	N 15-Ն 10.01.2008	41036	41036	1019	I տարում՝ 12 մլն դրամ, 96 մարդ/ամիս աշխատատեղ՝ 62 հազ.դրամ միջին աշխատավայրենվ, II տարում՝ 18 մլն դրամ, 120 մարդ/ամիս աշխատատեղ՝ 70 հազ.դրամ միջին աշխատավայրենվ, III տարում՝ 22 մլն դրամ, 144 մարդ/ամիս աշխատատեղ՝ 80 հազ.դրամ միջին աշխատավայրենվ:	09.04.2008	Աշխատա-վորական կողեկտիվ
3.	«Գորիսի տնկարան» ՊՓԲԸ (62383)	քաղ. Գորիս	ՀՀ կառավա-րությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 628-Ն 10.05.2007	376,5	376,5	2288	-	06.05.2008	Աշխատա-վորական կողեկտիվ
4.	«Ռեմիգել» ՓԲԸ» (90050)	Կոտայքի մարզ, ավան Բալահովիս	ՀՀ պաշտպանության նախարարություն	N 658-Ն 26.06.2008	153366	153366	50606	-	13.08.2008	Հայտնի գնորդ

Աղյուսակ 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցված ընկերությունների մասին

Հ/Հ	Պետական գույքի անվանումը	Հասցեն	Պետական կառավարման մարմնի անվանումը	ՀՀ կառավա- րության որոշման համարը, ամսաթիվը	Աճուրդի անցկացման ձևը	Անվանական <u>արժեքը</u> Մեկնարկային գինը (հազ.դրամ)	Աճուրդի հաղողի առաջարկած գինը (հազ.դրամ)	Պարտավորու- թյունները, (հազ. դրամ)	Պայմանագրի կնքման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Արարատի «Բերրիություն» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը * (61134)	քաղ. Վեղի, Արարատյան 5	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1075-Ն 25.09.2008	դասական	<u>2246</u> 1122,5	1122,5	1200	-
2.	«Չինարարություն, բարեկարգում» ԴՓԲՀ-ի բաժնետոմսերը * (62337)	քաղ. Երևան, Արգիշտի 1	Երևանի քաղաքապետարան	N 1166-Ն 16.10.2008	դասական	<u>2867</u> 2867	2867	12738	-
3.	«Ջրշին» շինարարական» ԴՓԲՀ (90013) *	քաղ. Երևան, Վաղարշյան 12	ՀՀ գյուղատնտեսու- թյան նախարարություն	N 179-Ն 28.02.2008	դասական	<u>560</u> 560	560	1620	-

2.1.3. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունները, դրանց կատարումը

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և մասնավորեցման օբյեկտների նոր սեփականատերերը ներդրումային և սոցիալական պարտավորություններ են ստանձնել հետմասնավորեցման տարիների համար:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է նաև մասնավորեցման սուբյեկտների ստանձնած պարտավորությունների կատարմամբ, որոնք վերահսկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության առներեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման պայմանագրերով Վարչության վերահսկողության ներքո է գտնվել 85 գնորդների ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց ստանձնած ներդրումային պարտավորությունները 2008թ. կազմել են 5461384.5 հազ. դրամ, 1229100 ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նախատեսված է եղել ստեղծել 4289 աշխատատեղ:

Վարչության կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով պայմանագրային պարտավորությունները կատարել են 74 գնորդներ, որոնց կատարած ներդրումները կազմել են 5628202.8 հազ. դրամ, 1519100 ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից ստեղծվել է 3171 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրային պարտավորությունները չեն կատարել կամ թերակատարել են 15 ընկերությունների կամ գույքի գնորդներ, որոնց կողմից չկատարված կամ թերակատարված ներդրումները կազմել են 273667.9 հազ. դրամ, 500000 ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից չի ստեղծվել 1573 աշխատատեղ:

Ընկերությունների կողմից պայմանագրային պարտավորությունները (ներդրումներ և (կամ) սոցիալական երաշխիքներ) չկատարելու և այլ հիմքերով Վարչությունը դատարան է ներկայացրել 8 հայցադիմում և մեկ դիմում, որոնցից բավարարվել են 2-ը, կարճվել է 1 գործի վարույք՝ Վարչության կողմից հայցից հրաժարվելու հիմքով, մերժվել է 1-ը, ընթացքում է գտնվել 5 գործի վարույք:

Նախորդ տարիներին և հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են Աղյուսակ 3-ում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

մասնավորեցված ընկերությունների և անավարտ շինարարության օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում
ժամկետները լրացած ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին

Հ/Հ	Ընկերության (մասնավորեցման օբյեկտի) անվանումը, հասցեն, պայմանագրի համարը և ամսաթիվը	Պայմանագրային պարտավորությունները	Պարտավորության կատարման ժամկետը	Պարտավորության կատարմանը՝ ըստ հաշվետվորյան	
1	2	3	4	5	
1	«Կոնսելտ» ԲԲԸ 69,95%	5 տարվա ընթացքում Ընկերությունում կատարել 370,0 մլն դրամի ներդրումներ՝ ընկերությունում նոր արտադրություններ կազմակերպելու և առնվազն 130 աշխատատեղեր ստեղծելու Սիկոյան փող. 15: Աշուն Քաղղաքարյան, ք. Երևան, Խանջյան 31ա, բն. 37: 636-Ռ 29.12.2003թ.	5 տարվա ընթացքում Ընկերությունում կատարել 370,0 մլն դրամի ներդրումներ՝ ընկերությունում նոր արտադրություններ կազմակերպելու և առնվազն 130 աշխատատեղեր ստեղծելու Սիկոյան փող. 15: Աշուն Քաղղաքարյան, ք. Երևան, Խանջյան 31ա, բն. 37: 636-Ռ 29.12.2003թ.	29.12.2008	Կատարվել է 441 667,18 հազ. դրամի ներդրում, ապահովվել է 158 աշխատատեղ:
2	«Հրազդանմաշ» ԲԲԸ-ի թիվ 4 մասնաշենքի գույք ք. Հրազդան, Գործարանային փող.: «Լեստար» ՍՊԸ, Ստեփան Աղամյան: 112-Օ 08.07.2003թ.	Հինգերորդ վճարումը կատարել 8 902,8 հազ. դրամի չափով: Հինգերորդ տարվա ընթացքում ապահովել 15,0 հազ. ԱՄՆ դրամի ներդրում և 50 աշխատատեղ՝ 50 000 դրամ ամսական «Լեստար» ՍՊԸ, միջին աշխատավարձով: Միջին աշխատավարձով:	31.03.2008 08.07.2008	Վճարված է: Կատարվել է 15,250 հազ. ԱՄՆ դրամի ներդրում, ապահովվել է 50 աշխատատեղ՝ 50 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:	
3	«Աշխատանքի գիտական կազմակերպություն» ՓԲԸ 80% ք. Երևան, Կոմիտասի 47: Ուազմիկ Մովսեսյան, ք. Երևան, Հ. Էմիլի 6-27: 227-Մ 24.01.2005թ.	Երրորդ տարում կատարել 3,0 մլն դրամի ներդրում և ապահովել աշխատանքով 13 մարդու՝ 30 000 դրամ ամսական աշխատավարձով: Աշխատավարձով:	24.01.2008	Կատարվել է 3,0 մլն դրամի ներդրում, աշխատանքով ապահովվել է 13 մարդ՝ 45 000 դրամ աշխատավարձով:	
4	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք՝ 568 քմ տարածք և գույք ք. Հրազդան, Սպանդարյան փող.: Բագրատ Առաքելյան, ք. Հրազդան, Շահումյան փող., տ. 110: 225-Մ 20.01.2005թ.	Երրորդ տարում կատարել 5,2 մլն դրամի ներդրում:	20.01.2008	Կատարվել է 5,8 մլն դրամի ներդրում:	

1	2	3	4	5	
5	«Վանմետաղառ» ՓԲԸ 100%	Երրորդ տարվա ընթացքում ապահովել աշխատանքով («Վանմետաղառ» ԲԲԸ) ք. Վանաձոր, Հյուսիսային 14: Ռոմիկ Մարտիրոսյան, Լոռու մարզ, գ. Քարաքեր:	360 մարդ/ամիս կամ ամսական միջին հաշվով 30 մարդու՝ 40 000 դրամ աշխատավարձով:	14.01.2008	Ապահովել է 362 մարդ/ամիս աշխատատեղ՝ 40 000 դրամ աշխատավարձով:
6	«Գլխամասային կոմունտնս» ՊՓԲԸ-ի կազմից առանձնացված «Վաղարշապատ» հյուրանոցի 4796 քմ տարածք և գույք, ք. Էջմիածին, Կիրովի փող.: Գևորգ Այվազյան, ք. Էջմիածին, Կմուճյանց փող., տ.32: 229-Մ 09.02.2005թ.	Երրորդ տարում կատարել 25,0 մլն դրամի ներդրում:	09.02.2008	Կատարվել է 25 մլն դրամի ներդրում:	
7	«Երևանի բեռնատար ավտոտրանս- պորտային թիվ 1» ՊՓԲԸ 100%	Երրորդ տարում կատարել 5,0 մլն դրամի ներդրում և տարվա ընթացքում ապահովել 180 մարդ/ամիս աշխատատեղ ք. Երևան, Միկոյան փող. 18: Սիսակ Դանիելյան, ք. Երևան, Սվերդլովի փող., տուն 11: 233-Մ 09.03.2005թ.	կամ ամսական միջին հաշվով 15 մարդու աշխատատեղ՝ 20 000 դրամ աշխատավարձով:	09.03.2008	Կատարվել է 5,0 մլն դրամի ներդրում, ապահովել է 180 մարդ/ամիս աշխատատեղ:
8	«Սպասարկում և մատակարարում» ՓԲԸ գույքի կազմից առանձնացված՝ Սիսիանի կենտրոնական հիվանդանոցին կից ԱՇՕ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան: Արա Թագլուսյան, ք. Երևան, Բրյուսովի 62, բն. 13: 727-Ու 26.01.2005թ.	Ներդնել 35,0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:	26.01.2008	Կատարվել է 12 770,8 հազ. դրամի (կամ 42,0 հազ. ԱՄՆ դոլարի) ներդրում:	
9	«Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ 100%	Երրորդ տարում կատարել 44,0 մլն դրամի ներդրում:	29.03.2008	Կատարվել է 81 145,7 հազ. դրամի ներդրում:	
	ք.Երևան, Արցախի պող., 4-րդ նրբ., 10ա: «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի աշխատավորական կոլեկտիվ:	«Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի աշխատավորական կոլեկտիվ:	743-Ու 29.03.2005թ.		

1	2	3	4	5
10	«Գյուղատնտեսության մեքենայացման և կենսագործական գիտահետազո՞նության խնդիրների վերաբերյալ» ՓԲԸ 100% Կոտայքի մարզ, ք. Եղվարդ: Աշխատավորական կողեկտիվ: 835-Ռ 03.05.2006թ.	Կատարել 40,0 մլն դրամի ներդրում: Երրորդ տարվա ընթացքում ստեղծել 35 աշխատատեղ՝ 45 000 դրամ միջին ամսական աշխատավարձով: Կոտայքի մարզ, ք. Եղվարդ: Աշխատավորական կողեկտիվ: 835-Ռ 03.05.2006թ.	03.05.2008	Կատարվել է 56 479 634 դրամի ներդրում: Ստեղծվել է 35 աշխատատեղ՝ 45 000 դրամ միջին աշխատավարձով:
11	«Վան» ՓԲԸ 80% ք. Երևան, Ֆուչիկի 27: «Ուղիոտեխսկոմպլեկտ» ՓԲԸ, լիազորված անձ՝ Աշոտ Ղորոխչյան: 238-Մ 31.05.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում ապահովել աշխատանքով 35 մարդու՝ 35 000 դրամ նվազագույն աշխատավարձով:	31.05.2008	Ապահովվել է 36 աշխատատեղ՝ 35 500 դրամ նվազագույն աշխատավարձով:
12	«Բարի երթ» ՊՓԲԸ 100% ք. Երևան, Ավանեսովի 1: Աշխատավորական կողեկտիվ, տնօրեն՝ Արտավազդ Ասարյան: 733-Ռ 16.02.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում կատարել 1 666,6 հազ. դրամի ներդրում:	16.02.2008	Կատարվել է 3 361,5 հազ. դրամի ներդրում:
13	«Կայծակ» բարձր լարման տեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ 100% («Կայծակ» բարձր լարման տեխնիկայի ինստիտուտ» ԲԲԸ). ք. Երևան, Մանանդյան 33: «ՄՆԱԾՈՒՍ» ՍՊԸ, լիազորված անձ՝ Հայրապետ Թորգոմյան: 240-Մ 22.06.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում կատարել 25 000,0 հազ. դրամի ներդրում և ապահովել 708 մարդ/ամիս աշխատատեղ՝ 53 000 դրամ միջին աշխատավարձով:	22.06.2008	Կատարվել է 25 170,0 հազ. դրամի ներդրում, ապահովվել է 717 մարդ/ամիս աշխատատեղ՝ 66 510 դրամ միջին աշխատավարձով:
14	«Արտադրատեխնոլոգիական կոմպլեկտավորում» ՊՓԲԸ 100% («Արտադրատեխնոլոգիական կոմպլեկտավորում» ՓԲԸ) ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23ա: Աշխատավորական կողեկտիվ, տնօրեն՝ Վռամ Հովհաննիսյան: 740-Ռ 24.03.2005թ.	Ստեղծել 40 աշխատատեղ:	24.03.2008	Ստեղծվել է 43 աշխատատեղ:

1	2	3	4	5
15	Գյումրու «Սիկրոէլեկտրաշարժի» ԲԲԸ 80%	Երրորդ տարվա ընթացքում ապահովել աշխատատեղով 25 մարդու՝ 51 000 դրամ միջին աշխատավարձով: ք. Գյումրի, Չահումյան 137: «Մետրոլեյն» ՍՊԸ, լիազորված անձ՝ Լենա Ասատրյան: 247-Մ 09.08.2005թ.	09.08.2008	Ապահովել է աշխատանքով 25 մարդ՝ 53 000 դրամ միջին աշխատավարձով:
16	Վանաձորի կինոցանցի «Գուգարք» կինոթատրոնի գույք, այդ թվում՝ 904,97 քմ մակերեսով շենք, ք. Վանաձոր, Աղայան 39ա: Էռնանի Առաքելյան, ք. Վանաձոր, Աղայան փող. 22: 777-Ու 07.09.2005թ.	Մինչև 2009 թվականի հունվարի 1-ը ստեղծել 12 աշխատատեղ՝ 35 000 դրամ աշխատավարձով:	31.12.2008	Ստեղծվել է 12 աշխատատեղ՝ 35 000 դրամ աշխատավարձով:
17	«Նոր Նորք ուսանողական ավան» ՓԲԸ գույքի կազմից առանձնացված 396,4 քմ մակերեսու ունեցող կարսայատան շենք, ք. Երևան, Մողբովական 12: Արմենակ Ավրտչյան, լիազորված անձ՝ Արշավիր Կարապետյան: 315/2-Օ 24.03.2006թ.	Ստեղծել 13 աշխատատեղ:	24.03.2008	Ստեղծվել է 20 աշխատատեղ:
18	«Լոռվա ԳԵՌ» ՊՓԲԸ 100% Լոռու մարզ, Հաղպատի համայնք: «ՎԱԼԵԶՍ ՍՍՀԽՆԳ» ՍՊԸ, լիազորված անձ՝ Սահակ Կարապետյան: 249-Մ 13.09.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում կատարել 30,0 մլն դրամի ներդրում և ապահովել 600 մարդ/ամիս աշխատատեղ՝ 60 000 դրամ միջին աշխատավարձով:	13.09.2008	Կատարվել է 30,0 մլն դրամի ներդրում, ապահովել է 608 մարդ/ամիս աշխատատեղ՝ 68 318 դրամ միջին աշխատավարձով:
19	«Ատոմ» գիտաարտադրական ձեռնարկություն» ՓԲԸ 100% ք. Երևան, Թեոսյան 3/1: Աշխատավորական կողեկտիվ, լիազորված անձ՝ Ռազմիկ Մալիսասյան: 789-Ու 03.10.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում կատարել 15,0 մլն դրամի ներդրում և ապահովել 43 աշխատատեղ՝ 150 000 դրամ միջին աշխատավարձով:	03.10.2008	Նախապատրաստվել է հայց դատարան:

1	2	3	4	5
20	ՀՀ սեփականությունը հանդիսացող 46335,7 քմ տարածք և գույք, ընդ որում՝ «Մշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրագրված և հետ վերցված 735817 հազ. դրամ արժեքով գույք և «Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրագրված և հետ վերցված 1687295 հազ. դրամ արժեքով գույք, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի գրոսայօնի: «ԲԱՍՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ, Գեղարքունիքի մարզ, գ. Թազազյող, տնօրեն՝ Ստեփան Ստեփանյան: 319/1-Օ 30.09.2005թ.	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 տարվա ընթացքում Երևանի մարզամշակութային համալիրի գույքի վերակառուցման և արդիականացման նպատակով կազմակերպությունում իրա- կանացներ 4 275,0 մլն դրամի ներդրում: Կատարվել է 4336435,4 հազ. դրամի ներդրում:	30.09.2008	Կատարվել է 4336435,4 հազ. դրամի ներդրում:
21	«Կոչենան» ՊՓԲԸ գույքի կազմից առանձնաց. Կապանի բազայի գույք, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարիկավան քաղ. (գ. Դավիթ-Բեկ): Նաղեմդա Ներսեսյան, ք. Կապան, Դավիթ-Բեկի շ. 7, բն.72: 253-Մ 27.09.2005թ.	Երրորդ տարվա ընթացքում կատարել 1,5 մլն դրամի ներդրում:	27.09.2008	Կատարվել է 1,5 մլն դրամի ներդրում:
22	«Դիլիջանի բեռնաուլուրատար ավտոտրանսպորտային» ՊՓԲԸ 100% ք. Դիլիջան, Գետափնյա 3: Գետրդ Յաղերյան, Ո-Դ, ք. Կալուգա, գ. Խելինոտով, Զելյոնայա փող., տ. 60: 798-Ո1 18.10.2005թ. (եռակողմ պայմանագիր 24.05.2006թ.) Հակոբ Հակոբյան, ք. Երևան, Այվազյանի փող., տ.19:	Երրորդ տարվա ընթացքում կատարել 14,0 մլն դրամի ներդրում և ապահովել 240 մարդ/տարի աշխատատեղ:	18.10.2008	Կատարվել է 41 360,5 հազ. դրամի ներդրում, ապահովել է 603 մարդ/տարի աշխատատեղ:

1	2	3	4	5
23	«Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ գույքի կազմից առանձնացված «Հրազդան մարզահամալիր ՎԶ» ՓԲԸ	5 տարվա ընթացքում կատարել 2,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում, այդ թվում՝ 600,0 հազ. ԱՄՆ դոլարին	31.12.2008	Կատարվել է 1350,0 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում:
	փարձակալությամբ տրված գույք, ք. Երևան, Հրազդանի կիրճ 4: «Հրազդան մարզահամալիր ՎԶ» ՓԲԸ, տնօրեն՝ Գագիկ Ժամհարյան:	համարժեք ՀՀ դրամ:		
	714-Ու 10.11.2004թ.			
24	«Հիդրոպարատների գործարան» ՓԲԸ-ի կազմից առանձնացված 913 քմ տարածքով ակումբի շենք և հիմնական միջոցներ, ք. Երևան, Զրվեծ բանավան: «ՍԱՆԱԳԱՎ» ՍՊԸ տնօրեն՝ Ռոմանոս Բաղրամյան	Կատարել 36,0 մլն դրամի ներդրում: Երրորդ տարվա ընթացքում ապահովել 18 աշխատատեղ՝ 40 000 դրամ միջին աշխատավարձով:	26.09.2008 26.09.2008	Կատարվել է 42 455,0 հազ. դրամի ներդրում: Ապահովվել է 18 աշխատատեղ՝ 45 750 դրամ միջին աշխատավարձով:
	786-Ու 26.09.2005թ.			
25	«Ամափայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ԲԲԸ 100% Շիրակի մարզ, գ. Ամափայ: Արթուր Մանուկյան, Շիրակի մարզ, գ. Ամափայ: 256-Մ	Երրորդ տարվա ընթացքում կատարել 500,0 հազ. դրամի ներդրում և ապահովել հետևյալ աշխատատեղերը՝ 2 մշտական՝ 20 000 դրամ նվազագույն ամսական աշխատավարձով և 3-ր՝ պայմանագրային հիմունքներով (3 ամիս ժամկետով՝ 40 000 նվազագույն աշխատավարձով:	15.12.2008	Կատարվել է 500,0 հազ. դրամի ներդրում, ապահովվել է 2 մշտական և 3 ժամանակավոր աշխատատեղ՝ համապատասխանաբար 25 000 և 40 000 դրամ աշխատավարձով:
	15.12.2005թ.			
26	Նախկինում «Անի-Էլեկտրոնիկա» ԲԲԸ պատկանող՝ Երևան քաղաքի 16-րդ բաղամասում գտնվող բնակելի շենքի ԱԾՕ, ք. Երևան, 16-րդ բաղամաս: Ազատ Նալբանդյան, ք. Երևան, Բաֆու փ., շ. 69, բն. 3: 260-Մ 14.02.2006թ. (պայմանագիր՝ 19.03.2007թ.) Գնորդ՝ Սուրեն Բաղդասարյան, Մափսի շրջ., գ. Այնուապ, 3-րդ շարք, տ. 19:	Կատարել 6,0 մլն դրամի ներդրում:	16.02.2008	Կատարվել է 6 200,0 հազ. դրամի ներդրում:

1	2	3	4	5
27	«Սասնաշենի հաստոցաշխնական գործարան» ՓԲԸ 80% Արագածոտնի մարզ, գ. Ն.Սասնաշեն:	Երրորդ տարվա ընթացքում կատարել 28 408,3 հազ. դրամի ներդրում և ապահովել 1080 մարդ/ամիս աշխատատեղ՝ 40 000 դրամ նվազագույն աշխատավարձով:	30.12.2008	Նախապատրաստվել է հայց դատարան:
	Հովակիմ Հակոբյան,			
	Արագածոտնի մարզ, գ. Ն.Սասնաշեն:			
	258-Մ 30.12.2005թ.			
28	«Լ. Արեջյանի ամփամ Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված՝ Վանաձոր քաղաքի Բանակի 8ա հասցեում գտնվող 1159,6 քմ մակերեսով ժամանակավոր մասնաշենք և գույք: «Լեռագեն» ՍՊԸ,	Ապահովել 13 աշխատատեղ:	26.12.2008	Ապահովել է 13 աշխատատեղ:
	տնօրին՝ Գայանե Ենգիբարյան:			
	824-Ռ 26.12.2005թ.			
29	«ԲԸԾ» ՊԲԸ 100% (ԲԸԾ» ԲԲԸ), ք. Երևան, Ա. Վահագյան 80:	Երկրորդ տարվա ընթացքում ապահովել 18 մարդ/ամիս աշխատատեղ՝ 25 000 դրամ միջին աշխատավարձով:	16.02.2008	Ապահովել է 18 մարդ/ամիս աշխատատեղ՝ 25 000 դրամ միջին աշխատավարձով:
	Նարինե Սարգսյան,			
	լիազորված անձ՝ Սամվել Սարգսյան,			
	ք. Երևան, Արարկիրի 19-րդ փող., շ. 6, բն 50:			
	262-Մ 16.02.2006թ.			
30	«Գագարինի նավթամբերք» ՓԲԸ կազմից առանձնացված թիվ 10 լցավորման կայանի գույք, այդ թվում՝ 102 քմ մակերեսով շինություն: Գեղարքունիքի մարզ, ք. Շամբարակ:	Պայմանագիր ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում կատարել 1,9 մլն դրամի ներդրում:	06.02.2008	Կատարվել է 4 816,8 հազ. դրամի ներդրում:
	Անոսոն Լազարյան,			
	ք. Շամբարակ, Կոմիտասի 29:			
	828-Ռ 06.02.2006թ.			

1	2	3	4	5
31	«Արարատ» մոր և մասնկան առողջարան» ՓԲԸ-ի 4867 բաժնետոմսեր, Վայոց ձորի մարզ, ք. Զերմուկ, Հահումյան 18: «Արարատ» մոր և մասնկան առողջարան» ՓԲԸ-ի ոչ պետական բաժնենախ սեփականատեր՝ Հակոբ Հակոբյան, ք. Զերմուկ, Սյասնիկյան 14շ., բն.13: 831-Ու 01.03.2006թ.	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում կատարել 35,0 մլն դրամի ներդրում :	01.03.2008	Կատարվել է 35 740,0 հազ. դրամի ներդրում:
32	Վայքի կինոցանցի «Արփի» կինոթատրոնի գույք, այդ թվում՝ 489 քմ տարածք, ք. Վայք, Ալավերդյան փողոց: Սուրադ Սուրադյան, ք. Վայք, Զերմուկի խճ., շ. 23, բն. 8: 263-Մ 21.02.2006թ.	Երկրորդ տարվա ընթացքում կատարել 3,5 մլն դրամի ներդրում:	21.02.2008	Կատարվել է 9 793,2 հազ. դրամի ներդրում:
33	Երևան քաղաքի Կարապետ Ռումենու 31 հասցեում գտնվող շենքի առաջին մասնաշենքի նկուղային, երրորդ, հինգերորդ և վեցերորդ հարկերից 2851,76 քմ մակերեսով տարածք: «ՏԿԻ» տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ» ՍՊԸ, ք. Երևան, Վ. Փափազյան 2-րդ նրբ., տ. 131, տնօրեն՝ Հայկ Օրդյան: 362-Օ 27.02.2006թ.	Երկրորդ տարում կատարել 15,0 մլն դրամի ներդրում:	27.02.2008	Կատարվել է 18 739 156 դրամի ներդրում:
34	Հրազդանի կինոցանցի գույքի կազմից առանձնացված «Քարեկամուրյուն» կինոթատրոնի գույք՝ 908 քմ տարածք և գույք, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս: Ուաֆիկ Նուրիջանյան, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., շ.78, բն.15: 226-Մ 24.01.2005թ.	Երրորդ տարում կատարել 6,5 մլն դրամի ներդրում:	24.01.2008	Կատարվել է 6 530,0 հազ. դրամի ներդրում:

1	2	3	4	5
35	Սևան քաղաքի կենտրոնական հիվանդանոցից արևելք գտնվող 7842 քմ մակերեսով շենքեր: Վահրամ Չոհրաբյան, ք. Գավառ, Ղամարյան փող., տ. 34: 365-Օ 16.03.2006թ. (առը ու վաճառքի պայմանագիր՝ 01.03.2007թ.): Գարիկ Խաչատրյան, ք. Երևան, Ամառանոցային 69:	Կատարել 8,0 մլն դրամի ներդրում: Կատարվել է 10 957,0 հազ. դրամի ներդրում:	16.03.2008	Կատարվել է 10 957,0 հազ. դրամի ներդրում:
36	Արքիկի կինոցանցի «Հայաստան» կինոթատրոնի գույք, այդ թվում՝ 665,2 քմ մակերեսով շենք, ք. Արքիկ, Անկախության փողոց: Աշոտ Շահրապյան, Շիրակի մարզ, գ. Մ. Մանթաշ: 832-Ու 03.03.2006թ.	Երկրորդ տարվա ընթացքում կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	03.03.2008	Կատարել է 600,0 հազ. դրամի ներդրում:
37	«Պետական կրկես» ՊՈԱԿ-ին ամրացված գույք, այդ թվում՝ 0,57598 հա հողամասի վրա գտնվող 6070 քմ տարածք ունեցող կրկեսի շենք և 180,9 քմ օժանդակ շինություն, ք. Երևան, Ազարանգեղոսի 1: Աշխատավորական կոլեկտիվ (20 ֆիզիկական անձինք), լիազորված անձ՝ Իոսիֆ Պետրոսյան: 356-Օ 14.02.2006թ. (պայմանագրի փոփոխություն՝ 01.06.2006թ.)	Կատարել 100,0 մլն դրամի ներդրում:	04.07.2008	Կատարվել է 108,0 մլն դրամի ներդրում:
38	Տավուշի անասնամթերման գրասեն- յակի գույք, այդ թվում՝ 107,8 քմ շենք, Տավուշի մարզ, ք. Բերդ: Կորյուն Արոյան, ք. Երևան, Դ. Մալայան, շ. 22, բն. 6: 266-Մ 13.04.2006թ.	Երկրորդ տարվա ընթացքում կատարել 100,0 հազ. դրամի ներդրում:	13.04.2008	Կատարվել է 218 600 դրամի ներդրում:

1	2	3	4	5
39	«Մարտունու գյուղկենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան»	Ներդրումային աշխատանքներն ավարտելոց հետո մեկ տարվա ընթացքում ստեղծել 4 մշտական և 6 ժամանակավոր (3 ամսով) աշխատատեղ՝ 15 000 դրամ աշխատավարձով:	31.12.2008	Նախապատրաստվել է հայց դատարան:
	ՊՓԲԸ կազմից առանձնացված՝ ոչխարների էլեկտր ԱՇՕ,			
	Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն:			
	Վրույր Ասլանյան,			
	Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն:			
	267-Մ 18.05.2006թ.			
	267/1-Մ 03.05.2007թ.			
40	Երևան քաղաքի Թևոսյան 3/1 հասցեում գտնվող շենքի 7-րդ, 8-րդ և 9-րդ հարկերի 1815,3 քմ տարածք:	Երկրորդ տարում կատարել 2,5 մլն դրամի ներդրում: Տիգրան Ավետիսյան,	08.08.2008	Նախապատրաստվել է հայց դատարան:
		գտնվող շենքի 7-րդ, 8-րդ և 9-րդ հարկերի 1815,3 քմ տարածք:		
		381-Օ 08.08.2006թ.		
41	Երևան քաղաքի Դավիթ Անհատի 23 հասցեում գտնվող շենքից «Կառավարման և տնտեսական քարենայության օգտագործման իրավունքով տրամադրված և հետ վերցված 368,6 քմ տարածք:	Երկրորդ տարվա ընթացքում կատարել 6,0 մլն դրամի ներդրում և ստեղծել 22 աշխատատեղ՝ առնվազն 35 000 դրամ աշխատավարձով:	04.08.2008	Կատարվել է 14 645,0 հազ. դրամի ներդրում, ապահովվել է 22 աշխատատեղ՝ առնվազն 35 000 դրամ աշխատավարձով:
		պ. Գյումրի, Տերյան 98 ա, բն. 19,		
		տնօրեն՝ Սերգ Տոնոյան		
		379-Օ 04.08.2006թ.		
42	«Գուգարքի ԳԵՌ» ՊՓԲԸ 100% Լոռու մարզ, գ. Մարգահովիտ:	Երկրորդ տարվա ընթացքում կատարել 20,0 մլն դրամի ներդրում և ապահովել 170 մարդ/ամիս աշխատատեղ՝ 40 000 դրամ աշխատավարձով:	30.08.2008	Կատարվել է 20 մլն դրամի ներդրում, ապահովվել է 187 մարդ/ամիս աշխատատեղ՝ 51 731 դրամ աշխատավարձով:
	«Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ,			
	լիազորված անձ՝ Մահակ Կարապետյան:			
	269-Մ 30.08.2006թ.			

1	2	3	4	5
43	«Լոգիստիկ կենտրոն» ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված՝ Երևան քաղաքի Այվազովսկող 4 հասցեում գտնվող 1764 քմ մակերեսով արտադրական ծառայության տեղամաս և 79,7 քմ մակերեսով էլեկտրական ենթակայան: Հենրիկ Խաչատրյան, ք. Երևան, Չարենցի փող., 40 շ., բն. 25: 841-Ու 25.09.2006թ.	Երկրորդ տարում կատարել 1,5 մլն դրամի ներդրում և ապահովել 8 աշխատատեղ:	25.09.2008	Կատարվել է 16,0 մլն դրամի ներդրում և ապահովվել է 10 աշխատատեղ:
44	Հայաստանի փրկարար ծառայության տնօրինության՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շահումյան 22ա հասցեում գտնվող նախկին հրշեց կայանի 216 քմ ընդհանուր մակերեսով շենքեր և շինություններ: Գագիկ Գևորգյան, ք.Կապան, Շինարարների փող., 14 շ., բն. 39: 386-Օ 19.09.2006թ.	Երկրորդ տարում կատարել 3,3 մլն դրամի ներդրում:	19.09.2008	Կատարել է 3,3 մլն դրամի ներդրում:
45	«Լոգիստիկ կենտրոն» ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված Երևան քաղաքի Այվազովսկող 4 հասցեում գտնվող վարչական շենքից 950 քմ արտադրական տարածք: «ՍՍՕ Պլաստ» ՍՊԸ, տնօրեն՝ Հենրիկ Խաչատրյան 842-Ու 25.09.2006թ.	Երկրորդ տարում կատարել 1,5 մլն դրամի ներդրում և ապահովել 15 աշխատատեղ:	25.09.2008	Կատարվել է 15,9 մլն դրամի ներդրում և ապահովվել է 18 աշխատատեղ:
46	Նախկինում «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին պատկանող՝ Երևան քաղաքի Դավթաշենի 4-րդ քաղաքասում գտնվող ԱՇՕ: Աշոտ Պետրոսյան, ք. Երևան, Ֆրիկի փող., տ. 5: 270-Մ 12.09.2006թ.	Երկրորդ տարում կատարել 5,0 մլն դրամի ներդրում:	12.09.2008	Նախապատրաստվել է հայց դատարան:

1	2	3	4	5
